Թիւ. 19.

# ԴԻՏԱԿ ԲԻՒԶԱՆԴԵԱՆ

## 'Ի ԽՆԴԻՐՈՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՐՇԱՐՈՒՆԵԱՑ

---

1813.

30. 31. ՄԱՐՏ։

### ՍԱՔՍՈՆԻԱ.

Տրեզտա. 4 Մարտի։

Ամէն հարկաւոր պատրաստութիւնքը հոգացվեցաւ, եւ քշելու Թշնամւոյն առաջ եկած զօրքը՝ թէ որ յարձակելու ըլլայնէ։ Էլպա գետը՝ Թոռկաւուէն ըսկսած, ունի իրեն ակնէ ուժով պաշտպանութիւն մասկոֆներուն դէմ, եւ մանաւանդ հեծելազօրքը՝ ուսկից որ թշնամւոյն կըրնայ յարձակիլ։ Ֆիւսերկաուէն մինչեւ Վիթթէնպէրկ, ամէն գետին վրայ գըտնըւած նաւակները, լաստերը, քակեցաւ ձախ գին, ուրաներ որ կըպահպանեն Ֆրանսըզները. սա հարկաւոր հոգաբերութիւնքը եղաւ նաեւ Տէսսաուէն մինչեւ Մակտեպուրկ, ու ասոր առանցմէ վար։ Մօթիէնթոյն Ֆրանսըզ Ճէնէրալը՝ սա պիտաւոր քաղաքին մէջն է, մեկ Ֆրանսըզի միաւոր գունդովմը, պահելու համար Էլպա գետին հարկաւոր անցքերը։

Ռէնիէր Ճէնէրալը իր քաջութեամբ ու խոհեմութեամբ իրեն զօրքերը ընտիրցընելէն նաեւ քաջերին քով, ինչպէս որ պատմեցինք անկից առաջինին մէջ, եւ քաշեցաւ մինչեւ սորին Լուզացեային գետոյը, որ է մեկ պատուանդ նեղմէկտանոց մէջ, առանձնակից Սէքզոնեային արեւելեան կողմանէ, եւ Պօեմիային հարաւային կողմանէ. սա Ճէնէրալը Սաքսոն պիտոր կենայ մէկ քանիօրմը իրեն գունդովը, անկից վերջը պիտոր երթայ Պրուսեային քաղերը, պատրաստելու համար Լուզացեան Սէքզոնային կողմանէ։

Բոլոր մասկովներուն զօրութիւնը բաժնըված է զանազան գունդեր. սանց միաւոր զօրաց առաջ երթալուն արգել կըլլանեն սառերուն հալելը, ու գետերուն ջրերուն թաղմէշ ըլլալը։

Բայց 'ի Բէռլինուէն բերողէն՝ ըսեն ըսրգեր՝ չէրնիան թշնամւոյն ձեռքը, այսպէս որ երթիրեն Ֆրանսըզները. եւ հեռ իրենց զանակիցները. անոր համար պէտք որ առաջ

ու

ալ ակէ գայ Թշնամինն, չի գրնար իրեն մէկ հաստատուն կենալու տեղմը, մանաւանդ Թէ այնչափ տարածվելով, անչափ զօրք ձգելով պաշարման համար անցած տեղերէն՝ շատ կըտըկարանայ։

Չի ըլլար ամենեւին մէկ բանմը մասկովի Թօփճիներուն վրայ, և ինչպէս որ կըկարծըվինէ՝ ճամբաներուն դեշութիւնը կըդըժվարացընեկոր ասոնց, իրենց Թօփերը առաջ տանելու։ (Օրագր. Կայսեր։)

Տեղեկութիւն Սպանիայ եղած Լամառք Փրանսըզ Ճէնէրալին գործերուն վրայ, որոնք կը ծանուցանէ Տէրայէն Ճէնէրալը՝ պատերազմի մեծ պաշտօնատարին։

Աս Ճէնէրալը, մարտի 22 ին, 23 երորդ գունդը խըրկեց Պեսալու՝ պաշտպանելու համար մէկ Թշնամւոյ գունդէմը, որնոր կերԹարկոր դէպ 'ի հոն, ու հրամայեց Լէֆէհվրէ Ճէնէրալին ալ որ խըրկէ ամսուս 4 ին մէկ գունդմը Տարնինօին վրայ, ու մէկ ուրիշմալ Ալպանիային վրայ, որ զի վըռընտէն անկից Կայիրոսին ապստամբներուն գլխաւորին գունդը։ Աս վերի ըսած 23 երորդ խումբը գնաց մինչեւ Լըռանէ ու Լըստօ քաղաքներուն, ու ասոնցմէ մէկ ուժով գունդմը գնաց Թուրնելյին վրայ՝ ուստի կըրնային արգելել ամէն կողմանէ Թշնամւոյն ետ քաշվիլը դէպ 'ի Քամբուէտօն։ Թշնամին բոլորովին կըկորսըվէր Թէ որ գըտնըվէր Քամբուէտօնին շըջանակները, բայց գըտնըվեցաւ Թալաքսա գեղին առջեւները, ու կըջանար պահել իրեն ալ կէ գիրքերը՝ ուրտեղոր կեցերէր. բայց մեր զօրքը կամաց կամաց վերջապէս մինչեւ դըրեԹէ բոլոր ան գեղին, որ ձախ կողմանէ ալ մէկ գունդովմը մեր զօրաց պաշարված էր։ Աս պատերազմիս մէջը 40 հոգի մեռան, ու խիստ շատ ալ վիրաւորվեցան։ Կախրոս Թշնամեաց գլխաւորը մազէ խալըսած փախաւ՝ շատ օր ետեւէ Լինալէն ետեւ Կըխմառտ տեղական Ճէնէրալը՝ 67 երորդ գունդին։

Մեր ձեռքը ինկան շատ զէնքեր ու պատերազմի պաշարներ, և 50 ալ գերացի՝ որոնք Թշնամւոյն չծառայելու համար փախան մեր քովը։

Հաստատեալ. Ճէնէրալ Լամառք։

(Մօնիթօռ։)

## ՄՈՍԿՈՎՍՏԱՆ.

Բէթռօպուռկ. 12 Փէպրվարի։

Յունվարի 11 ին հաստատվեցաւ մէկ ընկերութիւնմը՝ հրատարակելու նոր տեղեկութէ ծածուչին վրայ, ինչպէս որ հաստատվեցաւ Լօնտրա 1804 ին՝ աս վախճանիս համար. Աս ընկերութիւնը ունի հաղորդակցութիւն հարիւրի մօտ այսպիսի ընկերութիւններու հետ, որ կըգըտնըվին զանազան քաղաքներու մէջ. ծ 20 Ամերիկայ միացեալ նահանգներուն մէջ, ու մէկալները Եւրոպայի մէջ. Պասիլէա, Պէռլին, Քէնիզպէռկա. Բաէպուռկ, Սթօքօլմ, Ռաթիսպօնա, ու Քալքութթա քաղաքներուն մէջ։

Հոգ տարաւ աս ընկերութիւնը Թարգմանել տալու ծածուչ գիրքը՝ 23 Եւրոպական լեզուով, 25 Ասիական, 2 Ամերիկացւոց և տպվեցաւ ասոնցմէ 500 հազար օրինակ։

Աս վերջի տարիներուն գլխաւոր ընկերութէ գըրվօղներուն տըված ըստակը կըհանի, 85 հազար 62 վէնէտիկի եալտըզ ռուկի։ Աս ըստակէն 1201 ի չափ խարճըվեցաւ երկու Լիվօնիկեան լեզուով ծածուչը տպելու համար, և մէյմընալ Նէմցէներէն Նէմցէներուն՝ որոնք են Վօլկա մասկովստանի մէջ եղած մեծ գետին քովերը։

Ասօր նման մէկ ուրիշ պզտիկ ընկերութիւնմըն ալ հաստատվեցաւ աս մեծ ընկերութէ պաշտպանութէ տակ Ասպօ քաղաքը, նոյն վախճանին համար։ (Օրագր. Կայսեր։)

## ՊԱՎԻԵՌԱ.

Ասկուսթա. 14 Մարտի։

Ալէննայէն եկած Թուղթերը տըվին մեզի բաւական տեղեկութէ աս քաղքին խաղաղութէ ու հանգստութէը վրայ, որ հիմակվան վիճակիս մէջը կըվայելէ։

(Գազէթ. Փրանս։)

## ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Իրկին Սիկիլիոյ.

Նափօլի. 17 Մարտի։

Երեւելի արձանագործը Քանօվա անուանօրը.

որնոր հրամանաւ Նաբօլէի Թագաւորին կըշինէր մէկ ձի մը թուճէ՝ Նաբօլէօն կայսեր ամբողջ արձանը վըրան հեծցընելու համար՝ լըմընցաւ, ու աս օրերս դըրուեցաւ հրապարակին մէջը ։

Աս գործքս այնչափ կատարեալ ու այնչափ բնական է, որ կըթուէր թէ արհեստը կուզէկոր մեզի յիշեցունել հին հռոմըներուն երեւելի արձանագործներուն հրաշալի գործքերը ։ Ամէն արձանագործները որոնք ան ժամանակը դըտնըվեցան հոն՝ թէ Նաբօլիթանցի և թէ օտար երկիրներու, խիստ շատ զարմացան ։

(Մօնիթ. Կրէին Սինիւէոյ ։)

## ՓՐԱՆՍԱ.

Փարէզ. 22 Մարտի ։

Մարտի 22 ին, երբոր Նաբօլէօն կայսրը նըստած էր իրեն աթոռը, ու չորս դին բոլորած էին մեծամեծ իշխանները, պաշտօնատարները, Ճէնէրալները, ու ծերակոյտը և՛ն. ընդունեցաւ Օրէնադրական Ատեանը՝ որուն ձեռքով ժողովուրդը կըներկայացունէր Նաբօլէօնին իրենց բաղձանքը. ու սկսաւ խօսիլ այսպէս ։

„ Ով Թագաւոր ։

„ Քու հաւատարիմ հպատակներդ ամէն կողմանց եկան Օրէնադրական Ատեանը, ու մեզի յանձնեցին՝ քու աթոռիդ ոտքը ներկայացնելու իրենց երախտագիտութէ ու հաւատարմութէ նուիրմունքը ։

„ Երբոր քաղաքական մեծամեծ օգուտները՝ հեռացուցերէին Վեհափառ Տէրութենդ իր Երկիրներէն, միշտ ներկայ էիր քու հպատակներուդ սրտին մէջ, որոնք կըջանային իրենց նուիրմունքներովը հաղորդ ըլլալ քու աշխարհական աշխատանացդ՝ նմանապէս իրենց զաւակներնաւ հաղորդ կըլլային թէ փառացը և թէ վտանգներուն ։ Ինչպէս ան ատենը, անանկ ալ հիմայ մեր ամէնուն սիրտը մէկ է քու սրտիդ հետ ։ և կըրնանք ըսել, թէ մեր յաղթութիւնները՝ ուրիշ բանի համար կախ չիմնացին, բայց եթէ ցըցընելու համար քու իշխանութենդ զօրութիւնը, մեր օգտին և շահուն ընդարձակութիւնը, ու մեր վստահութիւնը՝ որ ունինք Վեհափառ Տէրութենդ վրայ ։

„ Այո՛, ով Թագաւոր, աս ընդարձակ Տէրութե զանազան ժողովուրդները՝ որոնց ամէն մէկը պէսպէս բարուց և պէսպէս սովորութէ տէր են, մէկ տեղ միանալով վասն պատուոյ և վասն փառաց, ուրիշ բանի համար չէին ջանար մէկ զմէկ գերազանցել. բայց եթէ վասն բարի նախանձու և մեծարանացը՝ որ ունին Վեհափառ Տէրութենդ, հեռացնելով իրենցմէ նաև մտածմունքը մէկ հաշտութեն մը, որ կըրնայ խաւարեցնել ազգային փառքը. և իրենց երկիրները ամբողջ պահելու համար, և քու դաշնակիցներուդ, ու իրենց մեծութիւնը ու զօրութիւնը՝ որ քու ձեռքովդ վաստըկեցան, որպիսի և իցէ նուիրմունք աչքերնուն առջև բան մը չերեւնար. ոչ զի ասանկով ձեռք ձգեն մէկ պատուաւոր հաշտութիւն մը, մի միայն արժանի Փրանսըզներուն, և Վեհափառ Տէրութենդ ։

„ Օրէնադրական Ատեանը ուրախ է և կըպարծենայ իրեն թարգման ըլլալուն վրայ ասանկ մէկ առատաձեռն ազգի մը համար, որ միշտ կընծայէ մէկ օգնութիւն մը՝ որնոր չափ չունի. վասն զի ուրիշ երախտագիտութիւն չունի՝ որ զինքը աս բաներուս չարժէ (զի միշտ օգնութեն ընծայելու և՛ն.), բայց եթէ ինչ որ Վեհափառ Տէրութենդ կըխորհի և 'ի գործ կըդնէ իրեն երջանկութեը համար ։

„ Իրաւ որ մեծամեծ յառաջադիմութիւնները երկրագործութե, ու արհեստներու, անթիւ ձեռագործները, որոնք նոր ճամբայ մը կըբանան վաճառականութե, ու կըզարդարեն մեր քաղաքները մեծագործ յիշատակներով, ու սահմանվիլը ծովային կըրթեալ ու բազմամարդ բանակի մը, մեր արքունական եկամուտներուն կարգին պահպանութիւնը՝ որ ինչվան աս մեր օրերը օրինակ մը չունէինք, արժան է որ ըլլայ մէկ կանոն մը յետագայ դարերուն. և ասոնց ամէն մէկը են բարերարութիք Վեհափառ Տէրութենդ՝ իր ժողովուրդներուն ։ Մենք՝ կըցըցընենք մեր գաւառներուն աս ամէն հրաշքները՝ որ գործեցան պատերազմի մեծամեծ զբաղմանց մէջ. ու կըսենք իրենց՝ թէ գանձին ու զօրքերուն ինչ որ հարկաւոր է նէ ապահովցուցած է, ուստի ձեր վրայ ուրիշ նոր տուրք չիձըգվիր ։ Ներկայ վիճակներնուս վրայ գոհ ենք. ու ասկից ետև չենք վախնար ան խռովութեն հանօզ

պակ.

պակասութեններէն՝ որուն մէջ իշխանութեան բաժանումը, ու իրեն օրինաց անհաստատութիւնը, գրեթէ վերջի սահմանը կըհասցընէին քաղաքական խռովութեանց երկիւղը: Կառավարութեան կարգը և յաջորդութիւնը հաստատուեցաւ. ու ան մօրը (ի նոր Թագուհւոյն) սիրտը կըլլայ մէկ հաւատարիմ պահապանմը իր որդւոյն՝ և ան մեծ տանը, որուն միահեծան իշխանութիւնը՝ է միշտ մէկ գրաւականը:

,, Այսանկով՝ կըհաստատուի ու աւելի լաւ կըյառաջանայ աս խնամակալու տէրութիւնը, որ անչափ սիրելի էր մեր պապերուն, ու իրեն հետ ալ արիական ան խորհուրդները որ փառաւորուեցան: Այսանկով՝ կըպատրաստուին հաշտութեան օրերը՝ աշխատութեանց մէջ, որոնք կըրնան աւելի լաւ ապահովցընել վայելմունքը. և պատերազմի պատրաստութեանցը մէջ, որոնք պէտք է որ ձեռք ձգեն աս հաշտութիւնը:

,, Աճ տայ որ՝ աս բարեբաղդ միաբանութիւնը Բրինչիբէլին ու հպատակներուն՝ միշտ կարենայ ըլլալ մեծ ուժը աս Տէրութեան, ու երջանիկ կապ իշխանութեան և հնազանդութեան. ու Օրինադրական Ատեաննալ կարենայ ստանալ իր փառքը, ըլլալով յիշատակաց արժանի մէկ օրինակմը:

Նաբօլէօնը պատասխան տըվաւ:

Ո՜վ Պարոն Նախագահ, և պարոն դեսպաններ,

,, Օրինադրական Ատեանը՝ աս համառօտ ու հարկաւոր ժողովին մէջ, ինծի փորձով իմացուց իր հաւատարմութիւնը և սէրը: Ես ալ կըճանչնամ:

,, Փրանսըզները բոլորովին ճշմարտեցին ան կարծիքը, որ ես միշտ ունէի իրենց վրայ:

,, Երբոր կոչուեցայ Նախախնամութենէն ու ազգէն կամքէն՝ հաստատելու համար աս մեծ Տէրութիւնը, իմ ընթացքս աստիճանաբար եղաւ, միակերպ, ու համեմատ կամաց, դիպուածոց և իմ ժողովրդոցս շահուն: Քիչ տարւան մէջ աս մեծ գործքս լըմնցած կըլլայ, և ինչվան հիմայ եղածներնալ բոլորովին կըհաստատուին:

,, Իմ ամենէն խորհուրդս, իմ ամենէն գործքերս մէկ վախճանմը միայն ունին. ի բարեբաղդութիւնը Տէրութեան, զոր ես կուզեմ միշտ ազատ ընել Ինկիլդէռայի օրէնքներէն:

,, Պատմութիւնը՝ որ դատաստան ընող է ազգերուն, ինչպէս որ կըդատէ զմարդիկները՝ անանկ ալ պիտոր ցըցընէ, թէ որպիսի խաղաղութեամբ, և որպիսի անկեղծութեամբ սրտի և որպիսի արագութեամբ՝ դէմը առնըվեցաւ մեծ մեծ կորուստներու. ասկից կըրնանք դատել, թէ Փրանսըզներուն զօրութիւնը ո՛ր չափը կըհասնի, երբոր պէտք ըլլայ իրենց երկիրները՝ ու իմ Պսակիս անկախութիւնը պաշտպանել:

,, Մեր թշնամիները՝ փոխարէն Նօրվէճիային, Նոճիրեցին Տանիմարգայի Թագաւորին Նըլպայի և Վէզէրի մեր բաժինները. ու աս գործքէս հետեւեցաւ որ իրենք դաշիններ գործեցին ան կողմերը: Տանիմարգան մերժեց ասնենգաւոր առաջարկութիւնները, որոնց հետեւանքը պիտոր ըլլայ կորուստը իր երկիրներուն, թող տալով թշնամիներուն փոխարէն մէկ մըշտընջենաւոր պատերազմմը մեզի հետ:

,, Ես շուտով կերթամ իմ զօրքերուս գլուխը կենալու համար, ու մեր թշնամիներուն սուտ խոստմունքը փճացնելու համար: Հիչ մէկ դաշնադրութեան մէջ Տէրութեան ամբողջութիւնը վտանգի մէջ եղած չէ, և ոչ կըլլայ:

,, Երբոր աս պատերազմի հոգը մեզի քիչմը պարապ միջոց տայ նէ, նորէն կըկանչենք աս գլխաւոր քաղաքս ինչպէս որ զձեզ, անանկ ալ երեւելիները մեր Տէրութեան, որպէս զի ներկայ գըտնըվինք Թագադրութեան Կայսերուհւոյն՝ մեր ամենասիրելի ընկերոջը, և ժառանգաւոր Բրինչիբէլին՝ Հռոմայու Թագաւորին, մեր ամենասիրելի որդւոյն:

,, Մտածմունքը աս մեծ հանդիսութեան, որ առենօք կրօնի վերաբերեալ ու քաղաքական բաներներ, սիրտս կըշարժէ: Ես կըջանամ սահաթմը առաջ ընելու աս բանս, որպէս զի Փրանսայու բաղձանքը լեցընեմ: (Օրագր. Կայսեր:)

---

Աս գործքս՝ որ է պատմութեան հիմակվան առենիս, տասնըհինգ օրը մէյմը կըտըպուի,

Ի ՎԵՆԵՏԻԿ Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ: